ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ԱԲԵԼՅԱՆՑԻՆԵՐԻ «ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ» ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հոկտեմբերի 14-16-ը Հայաստանի Վանաձոր քաղաքի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը հյուրախաղերով հանդես կգա Թբիլիսիում, Գրիբոյեդովի անվան ռուսական ակադեմիական թատրոնի շենքում: Այդ առիթով, Թբիլիսիում է գտնվում թատրոնի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Վահե Շահվերդյանը, որը համաձայնեց պատասխանել թերթին հետաքրքրող հարցերին:

- Պարոն Շահվերդյան, ինչպե՞ս ծնվեց հյուրախաղերի գաղափարը:

- Ես դեռ անցած տարի էի մտածում Թբիլիսիում հյուրախաղեր կազմակերպել, քանի որ աբելյանցիները պարբերաբար եղել են հյուրախաղերով այստեղ: Եվ հատկապես այն տարիներին, երբ ես ղեկավարում էի Վանաձորի պետական դրամատիկական թատրոնը: Մենք 6-7 անգամ եղել ենք Թբիլիսիում: *(Վ.Շահվերդյանը 1996-2009 թթ. ղեկավարում էր Երեւանի Գ.Սունդուկյանի անվան պետական ազգային ակադեմիական դրամատիկ թատրոնը: խմբ.):*

- Ներկայիս հյուրախաղերն ի՞նչ առիթով են, եւ ինչո՞ւ հենց այս տարի:

- 1964 թվականն էր, երբ աբելյանցիներն առաջին անգամ եկան Թբիլիսի հյուրախաղերի: Ես շատ լավ հիշում եմ. դպրոցը դեռ չէի ավարտել. ծնողներիս խնդրեցի, որ խմբի հետ մեկնեմ, եւ նրանք ինձ Ժիրայր Կարապետյանին վստահեցին, նա այն ժամանակ Կիրովականի թատրոնի դերասան էր: *(Ժ.Կարապետյանը արդեն 45 տարի է ադամյանցիների առաջատար ու վաստակաշատ դերասաններից է: խմբ.)*: Այդպես ես առաջին անգամ եղա այստեղ: Փաստորեն, այս տարի այդ բարեկամության 50-ամյակն է: Հետո հաջորդեցին պատասխան հյուրախաղերը: Եվ արդեն պարբերաբար, 2-3 տարին մեկ, պարտադիր գալիս էինք, եւ իմ լավագույն բեմադրությունները մշտապես ներկայացվել են այստեղ: Ի դեպ, Հայաստանի եւ ոչ մի թատրոն այսքան երկարատեւ բարեկամություն չի ունեցել Թբիլիսիի հետ: Ամենաշատ հյուրախաղերով հենց մենք ենք ներկայացել:

- Երկու խոսք՝ Ձեր հյուրախաղային ներկայացումների մասին:

- Աբելյանցիները թբիլիսյան հանդիսատեսին կներկայանան վերջին շրջանի լավագույն ներկայացումներից երեքով՝ Վիլիամ Շեքսպիրի «Արքա Լիր», Ալեքսանդր Շիրվանզադեի «Չար ոգի», Արմեն Բայանդուրյանի «Աշնանային իրիկնամուտ»: Ներկայացումներում ընդգրկված է Աբելյանի անվան թատրոնի գրեթե ամբողջ կազմը, բոլորն էլ սրտատրոփ սպասում են, մեծ ոգեւորություն է այսօր թատրոնում:

- Ի՞նչ եք կարծում, այս 50 տարում ինչպե՞ս է փոխվել հանդիսատեսը:

- Ցավոք, մի ընդհանուր բացասական բան կա, ինչպես տեսնում եմ, դրանից զերծ չեն նաեւ թբիլիսյան թատրոնները: Անշուշտ, այսօր հանդիսատեսի պակաս կա: Առաջ եթե մենք ամսվա մեջ 25-26 ներկայացում էինք խաղում եւ գրեթե միշտ լեփ-լեցուն դահլիճներում, ապա հիմա ամսվա մեջ 8-10 ներկայացումը բարձր ցուցանիշ է համարվում: Եվ պատճառն ամենեւին որակը չէ: Խնդիրը սոցիալական է: Որակը չի տուժել, ընդհակառակը, ես կարող եմ վստահորեն ասել, որ այսօր տաղանդավոր երիտասարդներ կան թատրոններում, ովքեր գալիս են մեծ ոգեւորությամբ, սակայն մեկ-երկու տարի անց, հիասթափված հեռանում են: Եթե տարիներ առաջ դերասանը թատրոնից հեռանում էր, որովհետեւ դերեր չէր ունենում, ապա հիմա հեռանում է սոցիալական վիճակից դրդված: Այսօր հանդիսատեսը միշտ չէ, որ կարող է իրեն թույլ տալ նույնիսկ նվազագույն գներով իրացնել վաճառվող տոմսերը:

- Ինչպիսի՞ն է թբիլիսյան հանդիսատեսը, նմա՞ն է վանաձորյան հանդիսատեսին:

- Նման է ջերմությամբ: Մեր ներկայացումները այստեղ մշտապես ընթացել են շատ էմոցիոնալ մթնոլորտում եւ բուռն ծափերով ընդունվել հանդիսատեսի կողմից: Առհասարակ, աբելյանցիները շատ սիրված են Թբիլիսում, եւ ամեն ինչ կանենք, որ ներկայիս հյուրախաղերը եւս նորմալ անցնեն, հանդիսատեսը գոհ մնա՝ ինչպես անցյալում: Ի դեպ, երբ ես հյուրախաղերի առաջարկով եկա Գրիբոյեդովի անվան թատրոն, գրիբոյեդովցիները ցանկություն հայտնեցին իրենք եւս հյուրախաղերով հանդես գալ Հայաստանում, եւ հոկտեմբերի 11-12-ին նրանք Երեւանում ներկայացնելու են Լեւ Տոլստոյի «Ձիու պատմությունը»՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Ավքանդիլ Վարսեմաշվիլու բեմադրությամբ:

ԱՆՆԱ ՊԵՀԵՆԵՎՍԿԱՅԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՎԵԼԱՑՎԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության հայտարարությամբ, 2015 թվականին Վրաստանում կենսաթոշակները եւ մանկավարժների աշխատավարձը կավելացվի, թեպետ կենսաթոշակների ավելացման չափը հայտնի կդառնա առաջիկա երկու ամիսների ընթացքում:

«2015 թվականին Վրաստանում կենսաթոշակները կավելացվեն: Բացի այդ, կավելացվի նաեւ մանկավարժների աշխատավարձը: Ֆինանսների նախարարությունը, կրթության նախարարության հետ մեկտեղ, աշխատում է նախագծի ընդունելի տարբերակի մշակման ուղղությամբ»,- հայտարարեց ֆինանսների փոխնախարար Գիորգի Կակաուրիձեն:

Հիշեցնենք, որ 2013 թվականի սեպտեմբերի 1-ից բոլոր կենսաթոշակառուները եւ առաջին խմբի սահմանափակ հնարավորություններով անձինք սկսել են ստանալ կենսական նվազագույնի հավասարեցված կենսաթոշակ՝ 150 լարիի չափով (20 տոկոսով ավելի): Սեպտեմբերի 1-ից նաեւ մինչեւ 100 լարիի է հասցվել երկրորդ խմբի սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, սահմանափակ հնարավորություն ունեցող երեխաների, խնամակալին կորցրած եւ քաղաքական բռնությունների ենթարկված անձանց կենսաթոշակը: 2015 թվականի պետբյուջեի նախագծի համաձայն, սոցիալական պաշտպանության եւ կենսաթոշակային ապահովման ոլորտի համար հատկացվել է 2,01 միլիարդ լարի, ինչը կազմում է բյուջեի ծախսերի գրեթե 29 տոկոսը: Փաստաթղթի նախագծում նշված է, որ կառավարությունը վերապահում է ըստ տարիքի կենսաթոշակառուների կենսաթոշակի ավելացման իրավունք: 2015 թվականի պետբյուջեում ընդհանուր հատկացումները ծրագրված են 9,35 միլիարդ լարիի չափով, որից 8,575 միլիարդը բյուջետային միջոցներ են, 95 միլիոնը՝ գրանտներ, 680 միլիոնը՝ վարկեր: 2015 թվականի պետբյուջեի նախագծի նախնական քննարկումը կավարտվի հոկտեմբերի կեսերին, որից հետո խորհրդարանի դիտողություններով եւ առաջարկություններով նախագիծը կվերադարձվի կառավարությանը: Նախագծի վերամշակված տարբերակը խորհրդարանին կներկայացվի նոյեմբերին:

2015 թվականի պետբյուջեն պետք է հաստատվի մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի վերջը:

ՄԻԱՆԳԱՄՅԱ ՆՊԱՍՏ՝ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ

70001 վարկանիշից ցածր միավոր ունեցող սոցիալապես անպաշտպան փախստականները կառավարությունից կստանան միանգամյա նպաստ:

Նախարար Սոզար Սուբարի հայտարարությամբ, միանգամյա օգնությունը 200 լարիի չափով սոցիալապես անպաշտպան ընտանիքները կարող են օգտագործել էլեկտրաէներգիայի եւ գազի սակագների վճարման համար: Փախստականները հատուկ հատկացված այդ գումարը կկարողանան ստանալ նոյեմբերի 1-ից մինչեւ հաջորդ տարվա մարտը ներառյալ:

«Ավելի քան 23 հազար փախստական ընտանիք, ովքեր սոցիալապես անպաշտպանների բազայում գրանցված են 70001 միավորից պակաս վարկանիշով, կստանան միանշանակ 200 լարիի օգնություն: Դա պետությունը հատկացնում է ջեռուցման ծախսերի մարման համար»,- հայտարարեց Սուբարին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱԳՐՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է մտել պետական ագրոապահովագրության պիլոտային նախագիծը: Այն գյուղացիներին եւ ֆերմերներին կոչված է հնարավորություն ընձեռել ապահովագրելու իրենց բերքը:

Ագրոապահովագրության ծրարը նախատեսում է 70-ից մինչեւ 95 տոկոսի պետական ֆինանսավորում: Ծրագրի համաձայն, ֆիզիկական անձինք՝ որպես ապահովագրություն, առավելագույնս կարող են ստանալ 30 հազար, իսկ կոոպերատիվները՝ 90 հազար լարի:

Պետական ագրոապահովագրական ծրագրում ներգրավված են մի շարք ապահովագրական ընկերություններ, մասնավորապես, «Ալդագի բիսիայ», «Ամիսի խումբ», «Ձի Պի Այի հոլդինգ» ընկերությունները:

Ապահովագրության կանոնադրության համաձայն, ապահովագրվում են միայն այն հողամասերը, որոնց տրված է կադաստրային կոդ, այսինքն՝ ունեն ազիմուտային նախագծեր կամ GPS կոորդինատներ: Ծրագրի շրջանակներում, ապահովագրվում են գյուղատնտեսական գրեթե բոլոր մշակաբույսերը: Բերքը ապահովագրվում է տարերային այնպիսի աղետներից, ինչպիսիք են՝ կարկուտը, գերխոնավությունը, փոթորիկը, աշնանային ցրտահարությունները:

Ապահովագրության գործողության ժամանակահատվածում առանձին գյուղատնտեսական մշակաբույսերի հարցով ապահովագրությունն ուժի մեջ է մտնում միամյա մշակաբույսերի կապակցությամբ, եթե ապահովագրական ռիսկը ծագել է նրանից հետո, երբ հողամասում իրականացվել են համապատասխան գյուղատնտեսական մշակաբույսի համար նախատեսված ագրարային աշխատանքները, եւ պահպանվել են ագրոժամկետները, մշակաբույսի 90 տոկոսը հավասարաչափ աճել է եւ արդեն գտնվում է վեգետացիոն փուլում, վերգետնյա մասում՝ առնվազն 10 սանտիմետր: Նման պայմաններում, ապահովագրությունը գործում է մինչեւ բերքահավաքը: Սածիլների դեպքում, դրանց բաց տարածության վրա տեղափոխելուց հետո՝ առնվազն օրացուցային 10 օրվա ընթացքում: Ինչ վերաբերում է բազմամյա մշակաբույսերին, ապա, եթե ապահովագրական ռիսկերը ծագել են այն դեպքում, երբ մրգի դեպքում ապահովագրված տարածքում պտուղների 50 տոկոսի հասունությունն ընթանում է նորմալ, պտուղի չափը կազմում է առնվազն 0,8 սանտիմետր, բացառությամբ՝ բալի, կեռասի եւ տխիլի, որոնց դեպքում, ապահովագրությունն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ պտղի չափը կազմում է 0,4 սանտիմետր: Կորիզավոր պտուղների դեպքում, ապահովագրությունը ուժի մեջ է մտնում, երբ բույսն անցել է ծաղկավորման փուլը եւ արդեն ձեւավորման փուլում է գտնվում: Խաղողի դեպքում, այն ուժի մեջ է մտնում, երբ ավարտվում է փոշոտումը, եւ ի հայտ է գալիս պտուղը:

2014 թվականի հաշվարկով, վերոնշյալ ծրագրի համար հատկացվել է 5 միլիոն լարի:

Ինչպես նշեց Վրաստանի խորհրդարանի ագրարային հարցերի կոմիտեի նախագահ Գիգլա Ագուլաշվիլին, նախագիծը նշանակալի աջակցություն է ֆերմերների հետ, ովքեր տարիներ շարունակ երազել են ինչոր կերպ ապահովագրել իրենց բերքը:

«Տարիներ շարունակ հողի աշխատավորները տուժել են տարերային աղետներից: Ագրոապահովագրությունը, թեկուզեւ մասնակիորեն, կարող է փոխհատուցել տարերային աղետների հասցրած վնասը: Ապահովագրական դրամագումարի ֆինանսավորումը կիրականացվի պետության կողմից: Տոկոսադրույքը բավականին բարձր է, այն 80-ից 90 տոկոս է կազմում՝ կախված մշակաբույսի տեսակից:

Իր հերթին, Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, խոսելով ագրոապահովագրության ծրագրի մասին, նշեց, որ այն նշանակալի աջակցություն է ներկայացնում գյուղացիների եւ ֆերմերների համար: «Ագրոապահովագրությունը տարածվում է բոլոր գյուղմթերքների վրա, ֆինանսավորումը պետության կողմից կկազմի 70-ից 90 տոկոս, առանձին դեպքերում, այն կհասցվի նույնիսկ 95 տոկոսի»,- հայտարարեց գյուղատնտեսության նախարարը:

Անդրադառնալով ագրոապահովագրության ծրարի գործողության ժամկետների հարցին՝ նախարարը նշեց, որ պիլոտային ծրագիրը կգործի մեկ տարվա ընթացքում: «Այդ ժամանակահատվածը կօգտագործենք ծրագրի մանրամասների հստակեցման, հայտնաբերված թերացումների կարգավորման եւ նոր նախաձեռնությունների ներդրման համար: Ջուգահեռաբար, աշխատանքներ կիրականացվեն օրինանախագծի մշակման ուղղությամբ, որը կներկայացվի խորհրդարանի հաստատմանը: Բնականաբար, օրինանախագծի մշակման գործում ներգրավվել են ինչպես գործադիր եւ օրենսդիր մարմինները, այնպես էլ՝ ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչները: Միայն դրանից հետո հնարավոր կլինի խոսել ոլորտում երկարաժամկետ կարգավորիչների ներդրման վերաբերյալ»,- հայտարարեց Օթար Դանելիան:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ÌÆÖ²Î²¶ðàôÂÚàôÜ

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ԿԱՆԱՅՔ ԵՆ ԿԱՁՄԵԼ

Հետաքրքիր է, արդյոք տարվո՞ւմ է վիճակագրական ուսումնասիրություն աշխարհում տղամարդկանց եւ կանանց թվաքանակի հսկակեցման ուղղությամբ: Եթե այո, ապա հետաքրքիր է, տղամարդի՞կ են շատ, թե՞ կանայք:

Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ախալցիխե

Միանգամից ասենք, որ երկրի վրա կանայք միշտ էլ ավելի շատ են եղել, քան տղամարդիկ: Այս պնդմամբ հանդես են եկել Մաքս Պլանկի անվան էվոլյուցիոն մարդաբանության ինստիտուտի գիտնականները: Investigative Genetics հանդեսի էջերում ներկայացված հետազոտության մեջ մարդկության ժողովրդագրական պատմությունը կազմելու համար օգտագործվել է գենետիկական տեղեկատվություն ստանալու նոր մեթոդակարգ:

Գիտնականները հայրական գծով ժառանգվող Y-քրոմոսոմը (NRY) համեմատել են «մայրական» միտոխոնդրիալ ԴՆԹ-ի հետ: Հետազոտությանը մասնակցել է 51 ժողովրդի ներկայացուցիչ 623 տղամարդ:

Պարզվել է, որ դեռ Աֆրիկայից մարդու նախնիների միգրացիայից առաջ Homo ցեղատեսակի կանայք ավելի շատ են եղել, քան տղամարդիկ, եւ այդ օրինաչափությունը պահպանվել է ողջ պատմության ընթացքում:

ì²ðì°È²Î°ðä

ՀԱՆԳՍՏԱՑՐԵՔ ԱՉՔԵՐԸ

Հաճախ ասում են, որ դադարելով աչքերից փարիքից շատ ավելի մեծ եմ երեւում: Ուղղակի զարմանալի է, սակայն սփիպված եմ համաձայնել, որ, իրոք, աչքերիս փայլը կորել է, եւ չգիտեմ ինչպես վարվել:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Բաթումի

Իրոք, հաճախ մարդն իր տարիքից մեծ է երեւում, քանի որ աչքերը չեն փայլում եւ հայացքում հոգնածություն ու թախիծ է նկատվում: Իսկ դուք հանգիստ պարգեւո՞ւմ եք ձեր աչքերին:

Աչքերը փակեք 1-2 րոպե կամ որոշ ժամանակ առանց լարվելու նայեք հեռուն: Աչքերի մկաններն ու տեսողական նյարդն ամրացնելու համար օրվա ընթացքում ժամանակ առ ժամանակ աչքերը պտտեք ակնախոռոչում:

Փոշին եւ կեղտը նույնպես վատ են ազդում աչքերի վրա, այդ պատճառով ամեն օր աչքերի վաննաներ արեք: Դրանց համար պատրաստված ջուրը պետք է փափուկ եւ եռացրած լինի: Դեմքն ընկղմեք ջրի մեջ եւ մի քանի վայրկյանով աչքերը բացեք:

Եթե ձեր աչքերը կարմրել են, ապա դրանք կարող եք լվանալ երիցուկի լուծույթով: Դրա համար 5 գ երիցուկի վրա լցրեք եռջուր եւ, երբ ջուրը հովանա, լուծույթը քամեք: Բամբակը թաթախեք լուծույթի մեջ եւ դրեք աչքերին: Կոպերի համար օգտակար է նաեւ մերսումը: Մատների ծայրերը թրջեք ձիթապտղի յուղով եւ թեթեւ շարժումներով մերսեք կոպերը: Առավոտյան եւ երեկոյան թարմ եփած թեյի սառը թուրմով աչքերին թրջոցներ դրեք: Այս պարզ գործողությունները կատարելու դեպքում, դուք երկար ժամանակ կպահպանեք ձեր աչքերի երիտասարդությունը:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՆՈՂ ԲՈՒԺԱՀԵՂՈՒԿ

(կիտրոն, սխտոր եւ մեղր)

Մարդու առողջությունը մեծապես կախված է սրտանոթային համակարգի վիճակից, իսկ կիտրոնը, սխտորը եւ մեղրը բազմաթիվ առողջարար նյութեր են պարունակում, որոնք մաքրում են աթերոսկլերոզով ախտահարված անոթները եւ դրանց պատերն ավելի առաձգական են դարձնում:

Բուժահեղուկի պատրաստումը.- Կիտրոնները կեղեւի հետ միասին մանրացնել (հարմար է բլենդերով): Բոլոր բաղադրիչները միացնել հետեւյալ համեմատությամբ (6 մեծ կիտրոն + 4 մեծ գլուխ սխտոր + 200 գր մեղր): Բուժահեղուկը պետք է լցնել անթափանց շշի մեջ, թանզիֆով բերանը կապել եւ 10 օր պահել մութ տեղում: Դրանից հետո քամել: Առավոտյան ուտելուց 15 րոպե առաջ 1ճ.գ. այս խառնուրդը լուծել 1 բաժակ ջրում եւ խմել: Իսկ երեկոյան նույն գործողությունը կրկնել, սակայն ընթրիքից 1 ժամ հետո: Եթե անքնություն ունեք, ապա անմիջապես քնելուց առաջ խորհուրդ չի տրվում ընդունել, քանի որ այն աշխուժացնող հատկություն ունի: Բուժահեղուկն օգտագործելիս՝ սխտորի հոտը չի գալիս: Բուժումը չի կարելի կիսատ թողնել, քանի որ օրգանիզմի մաքրման մեխանիզմը գործի է դրվում, եւ դա պետք է ավարտին հասցնել:

ՌՈԲՈՏԱՏԵԽՆԻԿԱ

ՌՈԲՈՏՆԵՐՆ ՈՒ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ. ՈՐՏԵ՞Ղ Է ԹԱՔՆՎԱԾ ՎՏԱՆԳԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ռոբոտների հնարավորությունները կարող են ընդլայնել ամպային տեխնոլոգիաներն ու ծրագրերը (cloud computing), որոնք գնալով ավելի ու ավելի լայն տարածում են ստանում համացանցում: Օրինակ, լինելով on-line կապի մեջ, ռոբոտը կարող է տեղեկություններ ստանալ, օգնություն խնդրել՝ միաժամանակ շարունակելով տեղաշարժվել ողջ աշխարհով:

Սա տեխնոլոգիական արդեն սկսված զարգացման հերթական փուլն է: «Համակարգիչներն ու ամեն տեսակի տվյալներ փոխանցող սարքերն ավելի ու ավելի մեծ տեղ են զբաղեցնում մեր կյանքում, մեր կենցաղում եւ մեզ համար հարմար միջավայրում: Ի վերջո, ռոբոտները ներկայացնում են համակարգիչների աճող պահանջարկը, իսկ համակարգչի հետ մենք որոշակի շփման մեջ ենք: Ապագայում այդ շփումը կդառնա ավելի բազմազան, բնական եւ կտարածվի ամենուրեք»,- նկատել է Օքսֆորդի համալսարանի համացանցի ինստիտուտի գիտաշխատող Ջոսս Ռայթը:

Չի բացառվում, որ սա է պատճառներից մեկը, որի արդյունքում Google-ի նման հզոր ընկերությունները հաճույքով են զբաղվում ռոբոտատեխնիկայով: Որոշ հետազոտողներ, սակայն, մտահոգված են: Նրանք կարծում են, որ կխաթարվի անձնական կյանքի գաղտնիությունը, եւ ռոբոտները կդառնան այդ ընկերությունների ֆիզիկական ներկայացուցիչներ՝ մարդու կյանքի մասին լայն տեղեկություններ քաղելու հասանելիությամբ: Օրինակ, հավաքարար-ռոբոտը կարող է ձեր եւ ձեր կացարանի մասին տեղեկություններ հավաքել՝ փոշեկուլով աշխատելուն զուգահեռ: Հետո նա այդ տեղեկությունները՝ ձեր հոբբին, նախասիրություններն ու այդպես շարունակ, կհաղորդի այդ ընկերությանը, որը կկամենար իր արտադրանքի թիրախային խումբն ունենալ: Բայց հայտնի է, որ ռոբոտներն իրենց արտաքին տեսքով տարբերվում են համակարգչից: Նիդերլանդների Նեյմեհենի համալսարանի իրավունքի եւ համացանցում գաղտնիության փորձագետ Միրեյ Հիլդեբրանդը հայտարարել է. «Եթե ռոբոտները մարդանման լինեն՝ մարդիկ միգուցե սկսեն ռիսկի դիմելով վստահել նրանց»: Մարդիկ հակված են ռոբոտը համարել ավելի մեծ իրողություն, քան պարզապես նոր տեխնոլոգիա, նոր սարք, անգամ եթե ռոբոտը մարդանման չէ: Օրինակ, հաճախ մեջբերվող ԱՄՆ Ջորջիա նահանգի Տեխնոլոգիական համալսարանի հետազոտության համաձայն, սկավառականման ռոբոտ-հավաքարարի 30 սեփականատիրոջ հարցումը ցույց է տվել, որ սեփականատերերի մեծ մասը ռոբոտին կնոջ կամ տղամարդու անուն է տվել, ոմանք նրան համարել են ընտանիքի անդամ՝ ընտանի կենդանու նման մի բան:

(Շարունակելի)

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

«ՖԱՍՏ ՖՈՒԴ»-Ի ԱՐՄԱՏՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԽՈՐՆ ԵՆ

Իսկ դուք գիտե՞ք, որ միջին վիճակագրությամբ հին հռոմեացիներն իրենց կերակրացանկում ավելի շատ ֆաստ-ֆուդ էին գործածում, քան Նյու Յորքի ժամանակակից բնակիչները: Այո, Հին Հռոմում ֆաստ-ֆուդ կար, պարզապես այն կոչում էին «տերմոպոլիա» գեղեցիկ անունով: Ի տարբերություն հույների, հին հռոմեացիները հաճախ էին հրաժարվում տանը կերակուր եփելուց, նրանց տներում հաճախ նույնիսկ խոհանոց չէր լինում: Դրա փոխարեն, բոլոր քաղաքների փողոցներում բազմաթիվ խորտկարաններով շուկաներ կային, որոնցում վաճառվում էր մատչելի կերակուր: Ճիշտ այժմյան ֆաստֆուդի նման:

Քաղաքացիները կարող էին արագ կերակրվել՝ ուտելով տաք հաց կամ միս, որը փաթաթված էր խաղողի տերեւներով: Այն ժամանակներում ներկայիս համբուրգերի նմանակն էլ կար՝ տավարի միս ընկույզով, որն անպայման ճաշակում էին հացով: Ընդունված էր նաեւ ձիթապտղի յուղով պատված թթխմորով բլիթը, որն այժմյան պիցցայի նախատիպն էր: Ափսեաձեւ այդ բլիթի վրա միս ու բանջարեղեն էին շարում:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Մեծերը չգիտեն, որ իրենք մեծ են, իսկ բոլոր փոքրերը համոզված են, որ իրենք մեծ են:

ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆ
(1923-1988)
Հայ թատերական ռեժիսոր

Թե չի սիրում՝ թո'ղ չսիրի, սակայն երբեք չբամբասի:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(XII դար)
Վրաց բանաստեղծ

Սերը կնոջ կյանքի պատմությունն է, իսկ տղամարդու համար՝ կյանքի դրվագ:

ԺԵՐՄԵՆ ԴԵ ՍՏԱԼ
(1766-1817)
Ֆրանսիացի գրող

Ամեն ինչի մեջ միայն ծիծաղելի կողմը տեսնելու սովորությունը մանր հոգու ամենստույգ նշանն է, քանի որ ծիծաղելին մակերեսի վրա է գտնվում:

ԱՐԻՍՏՈՏԵԼ
(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)
Հռոմեացի փիլիսոփա

Սովորիր այնպես, կարծես հավիտյան ապրելու ես, ապրիր այնպես, կարծես վաղը մահանալու ես:

ՕՏՏՈ ՖՈՆ ԲԻՍՄԱՐԿ
(1815-1898)
Գերմանիայի կանցլեր

Խիղճը օրենքների օրենքն է:

ԱԼՖՈՆՍ ԴԵ ԼԱՄԱՐՏԻՆ
(1790-1869)
Ֆրանսիացի քաղաքական գործիչ

Թող ոսկին վերցնեն տխմարները, իսկ իշխանությունը՝ չարագործները, Հաջողության ստրուկները թող սարսռան նրա առաջ, ով վարում է հողը, ով ծաղիկներ է փայփայում, ով ծառ է աճեցնում. նա է հզոր բոլոր մարդկանցից:

ՖՐԵՆՍԻՍ ՈՒԻԹԻԵՐ
(1886-1952)
Ամերիկացի բնագետ

Երջանկության իսկական արժեքը իմանում են միայն այն ժամանակ, երբ նա արդեն անհետացել է:

«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

* * *

Կինը պատմում է իր անցկացրած երեկոյի մասին.

- Տանտերերը էնքան խնդրեցին, որ երգեմ, չկարողացա մերժել, երգեցի:

Ամուսինը.

- Ճիշտ էլ արել ես, ես դրանց հեչ չեմ սիրում:

* * *

Կինը.

- Հիմարի մեկը, անբան, ամբողջ կյանքս, ջահելությունս նվիրեցի քեզ, իսկ դու անբանի մեկը դուրս եկար...

Ամուսինը.

- Ա՜յ կնիկ, հերիք ա դիպլոմիտ հետ խոսաս...

* * *

Աշխատակիցը դիմում է տնօրենին.

- Ես ուզում եմ խնդրել, որ աշխատավարձս ավելացնեք, թե չէ արդեն 3 կազմակերպություն հետաքրքրվում է ինձանով:

- Եվ որո՞նք են դրանք:

- «Թրիլլերգոն», «Ղազախգազն» ու «Ծղալկանալը...»:

* * *

Ամուսինը կնոջը կանչում է պատշգամբ, ցույց է տալիս դեպի աստղերն ու ասում.

- Ուզու՞մ ես էսօր գնամ քեզ համար աաաաաաաաայ էն աստղը բերեմ:

Կինը.

- Ոչ մի աստղ, մինչեւ 10 տանը լինե'ս:

* * *

Զոքանչը գալիս է աղջկան ու փեսային հյուր, փեսան դուռը բացում է.

- Զոքանչ մայրի՞կ, էս երկա՞ր ես մնալու:

- Մինչեւ զզվացնեմ:

Փեսան.

- Փաստորեն, մի հատ կոֆե էլ չես հասցնի խմե՞լ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՊՀ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հոկտեմբերի 10-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում աշխատանքն սկսեց ԱՊՀ գագաթաժողովը: Գագաթաժողովին մասնակցում են ԱՊՀ անդամ երկրների բոլոր նախագահները, բացառությամբ Ուկրաինայի, որը գագաթաժողովում ներկայացված է հանձինս Բելառուսում Ուկրաինայի դեսպան Միխայիլ Եժելի:

Գագաթաժողովում քննարկվեցին տնտեսական, հումանիտար եւ իրավապահ ոլորտներում բազմակողմ համագործակցության հարցեր:

Հանդիպմանը ստորագրվեցին համատեղ գործողությունների իրականացմանն ուղղված մի շարք փաստաթղթեր:

ԱՊՀ շրջանակներում, միջոցառումների ավարտվելուց հետո, հանդիպումներ են պլանավորված Եվրասիական տնտեսական հանրակցության միջպետական խորհրդի (դրա մեջ մտնում են Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Տաջիկստանը) եւ Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի ձեւաչափով:

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա Աստանայում, 2015 թվականի աշնանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հոկտեմբերի 9-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Եվրամիություն-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Էլենի Թեոխարուսին:

Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել Եվրոպական խորհրդարանի Եվրամիություն-Հայաստան բարեկամության խմբի գործունեությունը՝ ուղղված Հայաստանի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունների խորացմանը, Եվրոպական խորհրդարանում Հայաստանին հուզող հարցերի բարձրացմանը:

Սերժ Սարգսյանը կարեւորել է նաեւ տիկին Թեոխարուսի այցելությունն Արցախ:

Էլենի Թեոխարուսը վստահեցրել է, որ Եվրամիություն-Հայաստան բարեկամության խումբը շարունակելու է ակտիվ աշխատանքը՝ ի նպաստ Հայաստանի ու հայ ժողովրդի բարօրության:

ՆԱԽԱՆՇՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի պաշտպանության նախարարությունում հոկտեմբերի 6-7-ին անցկացվեցին շտաբային բանակցություններ՝ ՆԱՏՕ-ի միացյալ ուժերի հրամանատարության ներկայացուցիչների եւ Հայաստանի ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության ներկայացուցիչների միջեւ:

ՆԱՏՕ-ի պատվիրակությունը Հայաստան է ժամանել Հայաստանի զինված ուժերին ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում նախանշված գործընկերության նպատակների իրագործմանն աջակցելու նպատակով:

Բանակցությունների ընթացքում, կողմերը քննարկել են նախորդ տարիների ընթացքում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում ՀՀ ԶՈՒ արձանագրած առաջընթացը, ՆԱՏՕ-ի ուժերի հետ օպերատիվ համատեղելիության բարձրացման նպատակով ՀՀ ԶՈՒ կրթական կարիքները: Բացի այդ, նախանշվել են 2015-16 թթ. համար համագործակցության հիմնական ուղղությունները, եւ կազմվել է ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության ու համագործակցության 2015թ. ծրագրի ճանապարհային քարտեզը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունել է «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի ներկայացուցիչներին:

Հրանուշ Հակոբյանը բարձր է գնահատել հիմնադրամի կողմից ջավախահայության համար իրականացվող մշակութային կյանքի, մարզական ոլորտների բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված ջանքերը:

Հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրել են հիմնադրամի ապագա ծրագրերը, որոնցով նախատեսվում է իրականացնել բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ, աջակցել հիմնադրամի նպատակներին համապատասխանող պետական, բարեգործական եւ այլ ծրագրերի ու միջոցառումների իրականացմանը, տրամադրել դրամական եւ նյութատեխնիկական օգնություն՝ դրանց կարիքն ունեցող անհատներին ու կազմակերպություններին:

Հանդիպման ավարտին, հյուրերը շնորհակալություն են հայտնել նախարարին ջերմ ընդունելության եւ իրենց նախաձեռնություններին աջակցելու պատրաստակամություն հայտնելու համար:

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ՝ «ՏԱՐՎԱ ՄԱՐԴ»

«Համազգային վստահություն» խորհուրդն ամփոփել է «Տարվա լավագույն հանրային ծառայող եւ տարվա լավագույն ապրանքանիշ 2014» ամենամյա ազգային մրցույթի արդյունքները:

Այս տարի առաջին անգամ, համաժողովրդական հարցումների արդյունքներով, հրապարակել է «Տարվա մարդ» անվանակարգում լավագույն հանրային գործչի՝ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի անունը: «Տարվա լավագույն քաղաքապետ» է ընտրվել Սեւանի քաղաքապետ Ռուդիկ Ղուկասյանը, իսկ «Տարվա նորարար բիզնես կառավարիչ» է ճանաչվել Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր տնօրեն Արսեն Թառոյանը:

Մրցանակներ են հանձնվել բիզնես ոլորտի առաջատարներին, ժամանցի վայրերի ղեկավարներին, պրոդյուսերներին ու գովազդային գործակալներին: Ավելի քան 40 անվանակարգերում խրախուսվել են տարվա ընթացքում իրենց աշխատանքային ձեռքբերումներով եւ կորպորատիվ պատասխանատվությամբ լավագույն ընկերություններն ու հանրային ծառայողները:

«Տարվա լավագույն հանրային ծառայող» եւ «Տարվա լավագույն ապրանքանիշ» մրցանակաբաշխությունն անցկացվում է արդեն չորրորդ տարին անընդմեջ: Արժանիներին որոշելու համար հարցումներ են անցկացվել հանրապետության բնակչության ու փորձագետների շրջանում:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՉԱՇԽԱՏՈՂ ԿԱՆԱՆՑ

Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից շրջառության մեջ է դրվել նոր օրենսդրական նախագիծ, որով առաջարկվում է 2016 թվականից հղիության եւ ծննդաբերության նպաստ վճարել նաեւ չաշխատող կանանց՝ միաժամանակ կրճատելով աշխատող կանանց վճարվող նպաստը:

«Ժամանակավոր անաշխատունակության մասին օրենքում» կառավարության նախաձեռնած օրենսդրական փոփոխություններով առաջարկվում է հղիության եւ ծննդաբերության նպաստը վերանվանել «Մայրության նպաստ», եւ այն վճարել ինչպես աշխատող, այնպես էլ չաշխատող կանանց՝ 140-օրյա այն ժամանակահատվածի համար, որը տրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդի գնացողներին:

Չաշխատող կանանց տրվող մայրության նպաստը կհաշվարկվի ըստ նվազագույն ամսական աշխատավարձի չափի: Իսկ աշխատող կանանց տրվող մայրության նպաստը կշարունակվի հաշվարկվել միջին աշխատավարձի չափով, սակայն արդեն կփոխկապակցվի աշխատանքային ստաժի տեւողության հետ: Ընդ որում, աշխատող կանայք կարող են նպաստ ստանալ իրենց միջին աշխատավարձի առավելագույնը 80 տոկոսի չափով:

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԸ ՏՈՆԵՑ ԻՐ 2699-ԱՄՅԱԿԸ

Համայն հայության հոգեւոր մայրաքաղաք Էջմիածին-Վաղարշապատը 2699 տարեկան է: Արդեն 6-րդ տարին է, ինչ, Էջմիածնի քաղաքապետի որոշմամբ, հոկտեմբերի 8-ին մեծ տոնակատարությամբ նշվում է քաղաքի օրը: Տոնական միջոցառումները մեկնարկեցին հոկտեմբերի 6-ին՝ հիմք ընդունելով 405 թվականին տառերի մուտքն Էջմիածին ու այդ առթիվ եռօրյա տոնակատարություն անցկացնելը:

Վաղարշապատ-Էջմիածինը մեծությամբ Հայաստանի 4-րդ քաղաքն է: Մինչ Վաղարշապատ կոչվելը քաղաքն անվանվել է Վարդգեսավան, իսկ դրանից առաջ Արտիմեդ: Միջին դարերում, մասնավորապես՝ միջնադարում, Վաղարշապատը մերթընդմերթ կոչվել է նաեւ Էջմիածին, որը համանուն վանքի անունն է: 1945 թվականին քաղաքը վերանվանվել է Էջմիածին եւ այդ անուն է կրել մինչեւ 1992 թվականը, երբ նորից վերանվանվել է Վաղարշապատ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում հոկտեմբերի 9-ին անցկացվեց ԱՊՀ անդամ պետությունների հարկային (ֆինանսական) հետաքննության մարմինների ղեկավարների համակարգող խորհրդի 16-րդ նիստը: Խորհուրդը հարկային հանցավորության դեմ պայքարի ուղղություններն ու երկրների համագործակցության հարցը քննարկել է ԱՊՀ գործադիր կոմիտեի եւ հրավիրված կողմերի՝ Լատվիայի ու Վրաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուրվագծվել է արտերկրում հաշվեհամարի բացման ոլորտում իրավախախտումների դեմ պայքարի հարցով ԱՊՀ երկրների հարկային հետաքննության մարմինների համագործակցության կատարելագործման սցենարը:

ՍՏԱՑՎԵԼ Է 31 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Մարդասիրական օգնության կարգով, 2014թ. հունվար-օգոստոսին Հայաստան է ներմուծվել 3 հազար 191,6 տոննա ապրանք, որի արժեքը կազմել է 12,8 մլրդ դրամ: Ստացված օգնության 27,9 տոկոսը կազմել են քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 23,7 տոկոսը՝ մանածագործական իրերը, 10,3 տոկոսը՝ սարքերը եւ ապարատները, 7,9 տոկոսը՝ տարբեր արդյունաբերական ապրանքները, 8,2 տոկոսը՝ մեքենաները, սարքավորումներն ու մեխանիզմները, իսկ 22-ը կազմում են մնացած ապրանքները:

ԱՊՀ երկրներից ստացված մարդասիրական օգնության ծավալն աճել է 7,3 տոկոսով եւ կազմել 659,6 հազար դոլար: Եվրամիությունից ստացված մարդասիրական օգնության ծավալն աճել է 50,9 տոկոսով՝ կազմելով 13 մլն 823,2 հազար դոլար, ընդ որում՝ Նիդերլանդներից ստացված օգնությունն ավելացել է 19,6 անգամ, Լեհաստանից ստացված օգնությունը՝ 2,3 անգամ:

ԿՄԵԱԿՎԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Համահայկական ամառային 6-րդ խաղերի խորհրդանիշն իր մեջ կամփոփի նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն արտահայտող տարր:

Խաղերի կոմիտեի նիստի ժամանակ առաջարկություն հնչեց կազմել ընդհանուր խումբ, որի անդամները լինեն նկարիչներ, ովքեր քննարկման ընթացքում կներկայացնեն իրենց գծապատկերները:

Վերջնական որոշում կայացվեց մինչեւ հաջորդ տարվա փետրվար ամիսն ընդունել խորհրդանիշի հետ կապված հայտեր: Որից հետո մասնագետները, ովքեր կկազմակերպեն բացման եւ փակման արարողությունները, իրենք էլ կգբաղվեն խորհրդանիշի վերջնական տեսքով: Խորհրդի նիստի ժամանակ հաստատվեց նաեւ 6-րդ խաղերի կանոնակարգը: Համահայկական խաղերի կոմիտեի հաջորդ նիստը կկայանա 2015 թվականի մայիսին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

11.10.2014. Սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն

Սուրբ թարգմանիչ վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայոց եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ» եւ տոնվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի ու նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու», որը շարժական է եւ նշվում է հոկտեմբերի 3-ից մինչեւ նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում:

13.10.2014. Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Թաթուլ, Վարոս, Թումաս, Անտոն, Կրոնիդես սուրբ հայրերի եւ Իննակյա վանքում նահատակված յոթ խոտաճարակների հիշատակության օր

14.10.2014. Սուրբ առաքյալներ Անանիայի, Մատաթիայի, Բառնաբասի, Փիլիպպոսի, Հովհաննեսի եւ Շիղայի՝ Սիղվանոսի հիշատակության օր

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան ազգային պետականորեն հավաստագրված համալսարանի հայ-վրաց լեզվի բանասիրության ֆակուլտետը հայտարարում է ընդունելություն:

Փաստաթղթերի ընդունումը՝ մինչեւ հոկտեմբերի 15-ը:

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան համալսարանին կից ավտորիզացված (հեղինակազորված) քոլեջը՝ հայկական դպրոցների 9-րդ դասարանի բազայի վրա, հայտարարում է ընդունելություն 2014/2015 ուսումնական տարվա համար հետեւյալ մասնագիտությունների գծով՝ համակարգիչ (համակարգչային համակարգերի եւ ցանցերի տեխնոլոգիա) ու հայոց լեզու եւ գրականություն: Ուսման վարձը՝ տարեկան 1200 լարի: Քոլեջն ավարտելուց հետո, ցանկացողները կարող են շարունակել ուսումն արդեն նույն համալսարանի հայ-վրաց բանասիրության ֆակուլտետում:

Հասցեն՝ Թբիլիսի, Մոսկովյան պողոտա 9ա:

Ընդունելությունը՝ հարցազրույցով, մինչեւ նոյեմբերի 1-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 240-11-88, 599-24-79-41, 595-09-39-97 593-10-21-46 հեռախոսահամարներով:

«ԹԲԻԼԻՍՈԲԱ-2014»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՏՈՆԸ ԿՆՇԱՆԱՎՈՐՎԻ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Ինչպես արդեն հաղորդել ենք, այս տարի Վրաստանի բնակիչների ամենասիրելի տոներից մեկը՝ «Թբիլիսոբան», մայրաքաղաքում տեղի կունենա հոկտեմբերի 25-ին եւ 26-ին:

Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի հավաստմամբ, այս տարվա միջոցառումները «բնակչության հիշողության մեջ երկար կմնան»:

«Այս տարի «Թբիլիսոբայի» ընթացքում ակտիվություն կլինի ոչ միայն քաղաքի կենտրոնական շրջաններում, միջոցառումներ տեղի կունենան բոլոր տասը շրջաններում»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան եւ հավելեց, որ ներկայիս քաղաքի օրն աչքի կընկնի նաեւ մի քանի կարեւոր նորամուծություններով, որոնցից մեկը Գինու փառատոնն է, դրա կազմակերպանը մասնակցում է Վրաստանի գինեգետների ասոցիացիան: Եվս մեկ նորամուծություն է «Թբիլիսիի մասին հոգացողը» տիտղոսի սահմանումը. այս անվանակարգի հաղթողները տոնի շրջանակներում կպարգեւատրվեն հատուկ մրցանակներով: Զուգահեռաբար, կկայանա պատվավոր թբիլիսցու տիտղոսի հանձնման ավանդական արարողությունը, թեկնածուների ընտրությամբ արդեն զբաղվում է հատուկ հանձնաժողովը:

Տոնի շրջանակներում կանցկացվեն ցուցահանդեսներ, համերգներ եւ այլ հետաքրքիր միջոցառումներ:

ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ

ՌՈԲԵՐՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐԳԵՎԸ

2013-2014 ուստարվա բազային աստիճանը հաջողությամբ ավարտած մի խումբ դպրոցականներ, «Իմ առաջին համակարգիչը» նախագծի շրջանակներում, պարգեւատրվեցին «Նոթբուք» համակարգիչներով:

Պարգեւատրության հանդիսությունը տեղի ունեցավ Վրաստանի կրթության եւ գիտության գործակալության սրահում (ՀԻԻԱ-ի կրթության եւ գիտության ենթակառույցի զարգացման գործակալության ֆինանսական եւ նյութական ռեսուրսների ծառայության աշխատանքի գլխավոր մասնագետ Լելա Սվիմոնիայի կողմից):

Նախարարության խրախուսմանը արժանացածների շարքում հայտնվեց թբիլիսցի Ռոբերտ Գրիգորյանը:

Նա Թբիլիսիի թիվ 96 ռուսական դպրոցի աշակերտ է, ով գերազանց գնահատականներով է փակել առաջինից մինչեւ իններորդ դասարանները, դպրոցում միակն է, որ արժանացել է նախարարական նշյալ պարգեւին:

Ուշիմ, խելացի... Այս բնորոշումները Ռոբերտի դեպքում թերի են: Նրա մասին խոսելիս՝ պետք է ավելացնել՝ նաեւ զուսպ է, հավասարակշռված, սկզբունքային: Որքան էլ, ամենալավ իմաստով, զարմանալի է, բայցեւ այդպիսին է 15 տարեկան Ռոբերտ Գրիգորյանը: Ի դեպ, նա հավասարապես հետաքրքրվում է բոլոր առարկաներով, առանձնապես սիրում է կենսաբանությունն ու մաթեմատիկան: Երազում է դառնալ ծրագրավորող: Հայերեն գրել-կարդալ սովորել է հայկական դպրոցների մանկավարժներ տատի եւ մայրիկի օգնությամբ:

- Ամբողջ օրդ անցնում է սովորելո՞վ:

- Իհարկե ոչ, հաճախ կիթառ եմ նվագում, համակարգչի դեմ նստում, փորձում եմ ոչ բարդ ծրագրեր հորինել...

- Ռոբերտ, գերազանցիկ լինելդ չի՞ խանգարում ընկերական հարաբերություններիդ, դու մի քիչ գոնե չե՞ս մեծամտանում նրանց շրջապատում:

- Իհարկե ոչ, ուսումը չի խանգարում ընկերներիս հետ հաստատված իմ պարզ ու անկեղծ հարաբերություններին:

- Ովքե՞ր են ծնողներդ:

- Հայրս իրավաբան է, մայրս՝ մանկավարժ:

- Եվ վերջին հարցը. ի՞նչ տվեց քեզ նախարարական պարգեւը:

- Ոգեւորեց ինձ: Շնորհակալ եմ պարգեւի համար, բայց, խոստովանում եմ, որ եթե նույնիսկ ինձ չպարգեւատրեին էլ, դարձյալ կսովորեի նույն ոգով...

- Ռոբերտ, ընդունիր նաեւ մեր ու «Վրաստան» թերթի ընթերցողների շնորհավորանքները: Ցանկանում ենք բոլոր նպատակներիդ իրագործում եւ ամենայն բարին:

ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ուտելիք, սնվելիք: 6.Քաղաք Իսրայելում: 9.Ամենափոքր լուսինը: 10.Թբիլիսիի Սուրբ ...ություն եկեղեցի: 12.Թբիլիսիի աշուղ, գուսան Սայաթ-Նովա. «... տվուղն կու խոցվի»: 14.Թաիլանդի մայրաքաղաքը: 18.Շատ զարմանալ, ապուշ կտրել: 21.Հեռուստացույցի մակնիշ: 23.Գաճաճ պետություն Եվրոպայում: 25.... պիցցա: 27.Արաքս գետի անվանումներից: 29.Շատ գեղեցիկ, չնաշխարհիկ: 31.«...ու կամ լալու կարծեմ պատճառ չիք» (Ե.Չարենց): 34.Մաղ ծախող: 36.Նիգերի «սիրտը»: 37.Լավի ու վատի միջեւ: 38.Հ.Սահյանի ծննդավայր գյուղը: 39.Քննություն Վրաստանի բուհերում «... կամ ընդհանուր ունակություններ»: 42.Ծխեցնում են եկեղեցիներում եւ գերեզմանոցներում: 44.Հիմար թռչուն: 46.«... նորից վառիր հուրդ հայրենյաց» (երգ): 47.Երգիչ ... Կոտունիո: 49.Հրազդանը նախկինում: 50.... հոգիներ: 52.Քարտի տեսակ: 53.Նույն տեսակի, ոչ տարբեր: 56.Պատ, շարվածք: 58.Խաղաղ ...: 60.Խիզախ, քաջ: 61.Մասունք, սուրբ ...: 63.Ավետիս կամ գույժ: 64.Իրավամբ, ճիշտ: 65.Ցիտրուս, կիտրոն: 66.Հայտնի բանտ Հայաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2....-Մարաշ (շրջ. Երեւանում): 3.Փափուկ, քնքուշ, նրբին: 4.Դպրոցի առաջին ...: 5.Վրաց նկարիչ ... Փիրոսմանի: 7.Բիրտ, վայրենի: 8.Լաս ...: 11.Զինվորական միավորում: 13.Գյուղացիական աշխատանք: 15.Մեքենային կցվածը: 16.Պետքական, հարկի: 17.Վերդիի հայտնի օպերաներից: 19.Հայկական ... լեռնաշղթա: 20.Էլի, դարձյալ: 22.Մարմնի վերջույթ: 24....ուն, ...ված: 26.Սգալ, բարձրաձայն լացել: 28.Ձկների խաղը: 29.Պանրի տեսակ: 30.Սատանա, չար ոգի: 32.Մայր (բրբ.): 33.«... ձիավորը» (Մայն Ռիդ): 35.Բնագավառ: 40.Երկրաչափական մարմին: 41.Հուլիոս ...: 43.Տանիք, ծածկ: 45....Դիաս: 48.Թշնամի: 50.Քաղաք եւ շրջկենտրոն Վրաստանում: 51.Գաթայի միջուկը: 54.Քաղաք Պատմական Հայաստանում: 55.Քաղաք Ֆրանսիայում: 57.Զգնալ: 59.Լեզվական արատ ունեցող: 62.Հովվի նվագարան:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 2.Երախ: 4.Գագաթ: 7.Պտուղ: 8.Ուլան: 9.Տյուն: 10.Ասպատակ: 14.Գզիրն: 16.Կալ: 18.Հովատակ: 22.Ոնց: 24.Բիրեմա: 25.Թեա: 26.Իցա: 28.Թագուհի: 31.Յոգուրտ: 34.Կորալ: 35.Անմիտ: 36.Ունիտա: 38.Կանեփ: 41.Կարգ: 44.Լետա: 45.Տեգր: 46.Կեկել: 48.Կաթ: 50.Աքաղաղ: 51.Տոլեդո: 52.Պաշար: 53.Լից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Սպիտակ: 2.Եղունգ: 3.Խոնարհ: 4.Գրիպ: 5.Գրատ: 6.Թզուկ: 11.Սնոբ: 12.Ալար: 13.Արամ: 15.Զանի: 17.Աբեղյան: 19.Վիպակ: 20.Տելուր: 21.Կաթիլ: 23.Ցցորմ: 27.Ագատ: 29.Գոռալ: 30.Հավետ: 32.Ունակ: 33.Տիար: 36.Ուստյան: 37.Ինգմար: 39.Ներկել: 40.Փաթթոց: 42.Աբեղա: 43.Գրետա: 46.Կապ: 47.Լոր: 49.Ադի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445